

ՈՒՍՏԱՎՈՐԻ ՄԵ ՀՈՒՅԱՆՏԵՏՐԵՆ

4 հունիս, 1945: Դարձյալ կճամբորդեմ... Շատ երկրներ այցելած եմ, տեսած եմ մեծ քաղաքներ, շքեղ հաստատություններ, գեղեցիկ և հրաշալի վայրեր, անթիվ ժողովուրդներու դարավոր ստեղծագործություններ, բայց ամենուրեք պանդուխտ զգացած եմ ու հողիս չէ ժպտած: Սակայն այսօր ուրախ և երջանիկ եմ, քանզի կճամբորդեմ հեղեղ երազներուս Հայրենիք՝ Մայր Հայաստան:

10 հունիս: Կյանքիս երջանկության օրը... այսօր ոտք դրի Հայոց աշխարհի վրա, համբուրեցի մեր նախնիքներու աշխունով ներկված սրբազան հողը, հանդարտեցի վայրաշարժեն դիտեցի Մայր Արաքսի պղտոջ ջուրերը, դույզ Մասիսները իրենց ձյունածածկ դադաթներով, ծծեցի Արարատյան դաշտի մաքուր և սուղ օդը, թմրեցի մեր հայրենիքի զով ջուրը ու վերջապես այտերս և չրթունքներս հարեցան Ս. Էջմիածնի հաղարամյա քարերուն ու մյուսոնարույր սրբությանց: Ամբողջ էությունս բերկրեցավ:

11—12 հունիս: Պատելով և մարդոց հետ ծանոթանալով անցուցի ժամանակս: Տեսա մեր նախնիներու հոյակապ տաճարները, համբուրեցի անոնց դերկամանները, հոգիոց ըսի հողեղոր հորս՝ Տ. Ծահե Ս.-ի շիրմին առջև, որ կհանգչի Ս. Գայանեի հիւնավուրց վանքի շուքի տակ: Պոռեցա աշխատանքի վերադարձող կոլխոզնիկներուն հետ, որոնց վառվուրտը դեմքին վերա աշխատանքի սերն ու նվիրումը դեղեցկորեն կցուրանա ու նաև հայ հաղթական բանակայիններուն հետ, որոնք քաջն Վարդաններու նման ցույց տվին արիություն և հերոսություն հայրենական պատերազմի ընթացքին: Ես խոսեցա առավոտ և երեկոս ժամերի եկող հայ հավատացյալին հետ, որուն հավատքը հաստատուն է Արարատի նման: Ես մտերմացա մեծին ու փոքրին, հայաստանցիին ու եկվորներուն, պատգամավորներուն և վերջապես ամենքին հետ, որոնց միտեն, արյունեն և էութենեն եմ: Ու այժմ սրտեղանդն կհավատամ, որ հայր իր երջանկությունը կդառնե Արարատի հավերժական նայածքին տակ և Ս. Էջմիածնի կաթողիկոսին ներքև:

22 հունիս: Ս. Էջմիածնի Մայր Տաճարի դռներին տակ մաշած, բայց հավիտենապես անմահ սրբազան քարերու շուրջ բո-

լորված պատգամավորներ կատարեցին Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը: Միաձայնությունով և խանդավառ մթնոլորտի մեջ կաթողիկոս ընտրվեցավ Տեղապալ Գեվորգ Սրբազանը: Այս ընտրությամբ կատարված է այժմ ամբողջ Հայության իղձը: Ճշմարիտ է, որ Տ. Պորեն կաթողիկոսի մահեն ետք ոչ ոք կարող էր այնպիսի խահմություն մարել կաթողիկոսարանի դռները, որպես կատարած է ընտրություն: Ան իր զգաստ և խոհեմ ղեկավարության, անվիական վարվեցողության, իր բառեսության և ողջմտության ընդհանր հոր ժամանակաշրջանի մը պիտի ստեղծե հայ եկեղեցու համար: Հայության կամքը և ձայնը իր հետն են: Միաձայնությամբ ընտրվեցավ ու միաձայնությամբ հայ ժողովուրդը պիտի առաջնորդվի իրմով:

24 հունիս: Հայրապետական օծումը կատարվեցավ մեծ հանդեսությամբ: Հայ եկեղեցվո և ժողովրդի ցնծատունն է այսօր: Փա՛ռք քեզ, Աստված, ալ մեր չրթունքները «Հանգուցյալ» բառը պիտի չարտասանեն: Լուսավորչի դահուն վրա բաղմեցավ արժանարևոտի հայրապետ մը հանձին Գեվորգ Զ-ի: Էջմիածնի, ինչպես նաև բոլոր հայ աթոռներուն նպատակը եղած է հոգեվոր կյանքի մշակում հավատացյալ հայ ժողովրդի մեջ և անոր ֆիզիկական մշտնջենական ապահովություն ու պահպանումը: Որքան ատեն որ հայ ժողովուրդը կա, անսասան կմնա Էջմիածինը: Ներկա դարուն մեջ չկա հաստատություն մը, որ ավելի կրնա ծառայել սփյուռքի հայ ժողովրդին, քան հայոց եկեղեցին: Սփյուռք Էջմիածնի կնայե, ինչպես նախահանգիտ մոտեցող նավը՝ փարոսին: Գեվորգ Զ մարմնացումն է այդ փարոսին:

9 հուլիս: Լսած էինք, թե «կրոնքը մեռած է, Պորհրդային Միության մեջ»: Սակայն մենք իրողությունը տարբեր դասնք: Մենք տեսանք ժողովրդին հավատքը իր Աստծուն և հայ եկեղեցու ու սրբությանց հանդեպ ոչ միայն Էջմիածին, այլ նաև Երևանի և ուրիշ վայրերու մեջ, ուր պատահություն ունեցանք այցելելու և պատարագելու: Հելլեն Զոնտոնը՝ Բենիթրոպիերի տվադ երեցը, որ Պորհրդային Միության զանազան կողմերը այցելած էր և ներկա էր Աղղային եկեղեցական ժողովին առա-

ջին ու չորրորդ նիստերուն և կաթողիկոսական օծման համաստեղ ինձ, թե «ներկայիս կրօնական վերադարձնում մը կա խորհրդային Միութեան մեջ և պետութեանը կնպաստե այդ շարժումին»։ Գոցված եկեղեցիներն և վանքեր կվերաբացվեն արդեն և հալատացյալներ առաջիկայում և երեկոս աղոթքի կերթան։ Եթե արտասահմանի հայերս արցունքաւ աչքերով դիտած ենք կրօնական վիճակը Հայաստանի մեջ, այժմ մեր խորունկ համոզումն ու հավատքն է, որ այդ արցունքը ժպիտի փոխված է մեր աչքերուն մեջ։

12 հուլիս։ «Հայաստան երկիր դրախտավայր», ի դուր չէ տաղերգած բանաստեղծը։ Դյուրութեամբ ընծալիցեալ մեղ հնարավորութեան սահմաններուն մեջ տեսնելու մեր երկրին դանադան կողմերը։ Հայաստան հարուստ է հոյակերպ վանքերով և հիշատակարաններով։ Ամեն մեկ քար պատմութեան մը ունի։ Մեր նախնիք անկենդան քարին մեջ իսկ կյանք դրեր են։ Ճարտարապետական ոճովի հոյակապ կառուցվածք ունեն մեր վանքերն ու եկեղեցիները, կոթողներ, որոնք պատիվ կրեն դանոնք կառուցանող ժողովուրդին։ Մեր հայրերը ոչ միայն աղոթքը են, այլև իրենց ճարտար ստեղծագործութեաններով զԱստված մոտեցուցեր են մարդուն սրտին ու հոգիին։

Հայաստան իր բնական տեսարաններով բանաստեղծական թուլչութեան մը ունի։ Արարատյան դաշտը անմասն է իր դեղեցկութեամբ։ Արարատ իր ճերմակ դադաթով կարեւ համբուրվել սոսկերուն հետ, որոնք մերթ կծածկեն իր ստորոտներու կողերը և ձյունի դադաթը կարծես կախված կթողուն երկնքի մեջ, մերթ կատարեն համբընթացորեն դեպի վար կտահեն ու կծածկեն չնաշխարհիկ լեռը իրենց շղարեն ներքե։ Կապույտ երկնքի տակ «Ալեւոր հսկան» կցուցադրե իր ամբողջ դեղեցկութեանը։ Մայր Արաքսը իր ոլոր մոլոր պտույտներով, Գեղամա ծովն ու Սեան կղզին իրենց կանաչափետ լեռներով և մուլդ երկնքով, Ծաղկաձորի երկնքաւառ և բուրբուռալիւս ծաղիկներն, ու անտառները, Աղատ դեպի խորխուր դիտված Տրդատա թախտեն ու Գե-

ղարդա վանքի հովտեն կույս բնութեանը, այս բոլորը իրենց յուրահատուկ դեղեցկութեամբ ուխտավորը կհամակեն դրախտի տաքությունը։

15 հուլիս։ Եկեղեցական ժողովի պատգամավորներուն հետ և երբեմն առանձին այցելիցի Երեանի կարևոր հաստատութեանները, ինչպես Պետական համալսարանը, Թշկական հաստատութեանն ու հիւրանը, Թշկական հաստատութեանն ու հիւրանը, Մատենադարանն ու Ձեմանդանոցները, Հանրային դրաղարանը, Ուսումնականը, Հանրային դրաղարանը, Պետհրատի շէնքը, հնութեանց, երկրաբանական և կերպարվեստի թանգարանները, թատրոնն ու օպերայի շէնքը, կառավարատունը, դիտութեանց ճեմարանը, երաժշտանոցը, «Արարատ» գործարանը, մանկաժողովուրդը և այլն։ Հիշյալ հաստատութեաններն իրենց կառուցվածքով, բովանդակութեամբ և ժողովուրդին իրենց մատուցած ծառայութեամբ փառք ու պատիվ կրեն հայ անունին։ Այցելուն կհիշանա այն մշակութային շինարարական գործունեության և արտադրութեանց վրա, որոնք կատարված են Երեանի և մոտակա նորակերտ ավաններուն մեջ վերջին քանի մը տարիներու ընթացքին։ Իսկ եթե պատկերազմը չըլլար, ալ ավելի ծրած, ծաղկած ու զարգացած պիտի գտնեինք մեր հայրենիքը։

Թատրոնն ու օպերան իրենց ներկայացումներով և բեմադրութեամբ որեւէ արվեստագետի նախանձը կընան շարժել։ Մենք տեսանք «Անուշ» և «Արմատ» օպերաները՝ հայկական համերգ կազմակերպված ՀՍՍՌ երաժշտական ուսումնական հաստատութեաններու ուսանողներու կողմէ։ Ինչպես նաև «Պատիի համար», «Համբիթ», «Կարմիր Մանյակը», «Երկիր հայրենի» խաղարկութեանները, «Ուսանող» խաղերը և «Դավիթ բեկ» շարժանկարը։ Ասոնք մեր սրտերը լեցուցին պղպային հրապտութեամբ և երջանիկ ենք, որ զանոնք տեսնելու պատահութեանը չնորհեցաւ մեկ։ Մենք պիտի վերադառնանք վերածնվող հայրենիքի մասին լայնադունդ պատգամներով և դադափարներով լեցված։

18 հուլիս։ Հայ ժողովուրդի հյուրասիրութեան ըմբռնելու և զգալու համար մարդ ապրելու է Հայաստան։ Մեր երկրի սահմաններուն հայրիկ մոտեցած տեսանք հայուն ավանդական ասպնջականութեանը։ Աշխարհի տնտեսական այս նեղ օրերուն մեջ բոլոր պատգամավորներուն Հայաստա-

նի մեջ ունեցած հյուրանոցի, կերակուրի և ճամբորդութեան ծախքերը հոգւնեցան էջմիածնի կողմէ: Երբ այցելեցինք կողոպտեալներուն, անոնք իրենց բախուցն խորովածով, դինիով ու կոնյակով պատվեցին մեզ: Օշական այցելութեանս ժամանակ աղքատիկ և հույս անշուք խրճիթէ մը ներս մտա ջուր խմելու: մնաք բարովի առնել, տանտիրուհին բռավ. «ինչո՞վ կրնամ հյուրասիրել զՁեզ»: Այս ոգին այցելուն պիտի դանկ հայաստանի բոլոր մասերուն մեջ, Հարուստին, աղքատին, շինականի և քաղաքացիին քով:

Երեանի հաստատութիւնները պատած միջոցիս հրճմանքով նշմարեցի պաշտոնյաներու և դործավարներու սիրալիր վարվեցողութիւնը, բարեկրթութիւնը, անոնց ժպտուն և սիրուն զեմքերը, ծառայութեան և օգնութեան ոգին:

19 հուլիս: Որոշմամբ է այսօր կամ վաղը ստիպուածով մեկնել Թեհրան: Հոգիս կրնդ վիշտ ալ կարգադրութեան դեմ: Ի՞նչ պէս բաժանվեմ հայրենի երկրեն, մեր պատմական եղբայրներեն ու քույրներեն, ընկերներեն ու սրբազան վայրերեն: Կուգեմ ապրել ու մեռնել հոս ու թողվել նախնիքներուս նշխարներուն հետ: Ներսես ճաշն մը, սակաշն, կըսե ինձ, թէ ժամանակավոր ք այս բաժանումը ու այս մտածումն է, որ սիրովանքի կաղզույցը կուտա ինձ: Եկա իբր ուխտավոր, կմեկնեմ որ

պէս ջերմեռանդ հալատացող և տարածիչ այն համոզումներուն և իրողութեանց, որ հայոց աշխարհը մշակութային և շինարարական ու արդյունաբերական մեծամեծ նվաճումներով պիտի փութալի: Ուշ է այն օրը, երբ Ախուրյանի և Արաքսի չրթերը պիտի համբուրվին և ալդ հաղթական համբույրին մեջ հայ ժողովուրդը պիտի տեսնէ ու դանկ իր դարավոր երազներուն իրականացումը, այսինքն միացալ Հայաստանի ստեղծումը:

Մեր թիկունքին կանգնած է ոտուս մեծ ժողովուրդը, որ մեր անկաշառ բարեկամն է: Մենք անցյալի մեջ եղած ենք մեծ, այժմ փոքր ենք, բայց ալդ փոքրութեամբ ավելի մեծ ենք հիմա, քան անցյալի մեջ: Հայը օտար երկնքի տակ ժպտա չունենա, այլ Մայր Հայաստանի մեջ իր նախնիքներու հողին վրա պիտի դանկ իր փտարանդի և տառապած հողմուխ ապավին և պաշտպան: Հայոց եկեղեցին ինչպէս ի հնումն, նույնպէս և այժմ, առաքելական և դաստիարակչական մեծ դործ և պարտականութիւն ունի կատարելիք մեր ժողովրդի հոգեւոր և բարոյական պաշտպանման և հարատեւման համար:

Ինչպէս միասնական էր Այդալին Եկեղեցական ժողովը, նույնպէս միասնական և միարան լինելու է ամբողջ հայութիւնը իր Հայրենիքին և եկեղեցիին շուրջ:

ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

